ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2572 - Ա **14 ապրիլի 2009թ.**

ՔՈՒՉԱԿԻ ՓՈՂՈՑԻ 24/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԶԱՆ ՄԱԹԵՎՈՍԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ՀԱԶԱՐԱՊԵՏ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ՔՐԻՍՏԻՆԵ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ԱՐՄԻՆԵ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Նազան Մաթևոսի Հակոբյանի (ծնված 16.10.1924թ.), Հազարապետ Համազասպի Հակոբյանի (ծնված 29.01.1955թ.), Քրիստինե Սերյոժայի Հակոբյանի (ծնված 03.12.1977թ.), Արմինե Սերյոժայի Հակոբյանի (ծնված 08.01.1986թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Քուչակի փողոցի հ.24/2 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 340.84քմ, որից 324.5քմ մակերեսով Նազան Մաթևոսի Հակոբյանին, Հազարապետ Համազասպի Հակոբյանին, Քրիստինե Սերյոժայի Հակոբյանին, Արմինե Սերյոժայի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 16.34քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1997 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 14.01.2008թ. հ.59, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 07.04.2009թ. հ.20/2-Ե/203 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 31.03.2009թ. հ.20-Ել-2565 եզրակացությունը, համաձայն որի Քուչակի փողոցի հ.24/2 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Քուչակի փողոցի հ.24/2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Նազան Մաթևոսի Հակոբյանի, Հազարապետ Համազասպի Հակոբյանի, Քրիստինե Սերյոժայի Հակոբյանի, Արմինե Սերյոժայի Հակոբյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 324.5քմ մակերեսով

հողամասին կից 16.34քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 16.34քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Քուչակի փողոցի հ.24 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Քուչակի փողոցի հ.24/2 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Նազան Մաթևոսի Հակոբյանի, Հազարապետ Համազասպի Հակոբյանի, Քրիստինե Սերյոժայի Հակոբյանի, Արմինե Սերյոժայի Հակոբյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա-Սեբաստիա թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ